ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 154.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը «չափով։» բառից հետո լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում նախահաշվային արժեք է համարվում շինարարական աշխատանքների տեսակների արժեքների խոշորացված ցուցանիշների վերաբերյալ պաշտոնապես հրապարակված տեղեկագրերով սահմանված դրույքաչափերին համապատասխան կատարված հաշվարկը։» բառերով։

Հոդված 2. Օրենսգրքի 154.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Շինարարության թույլտվության հիման վրա կառուցվող (վերակառուցվող) օբյեկտն առանց պետական լիազոր մարմնում դրա նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ ինքնակամ կառուցված օբյեկտը շահագործելն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։

Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված արարքը տուգանք նշանակելու որոշման կայացումից մեկ ամիս հետո կրկին կատարելը

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։